# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ԳԴԱԿ | ԳԴԱԿ | ԿԵՊԻ | ԳԴԱԿ ՍՊԸ | Կեպին կապտասև Dark Navy Blue, անջրանցիկ 100% պոլիէսթեր կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ2, ±3%, ջերմություն պահող: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Թասակը բաղկացած է հինգ կտորից: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովհարին 3սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7մմ հեռավորությամբ: Կեպին ներսի կողմից ունի տաք ներդիր, վզամասը և ականջները փակելու համար: Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ ետևում 1X8սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ: Ետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5սմ-ից ոչ պակաս: Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնիքված նմուշ: Ապրանքը ընդունվում է հաստատված նմուշի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համաձայն: Չափսերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը` լուսանկարին համապատասխան: Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 25 հատ, որը տեղադրվում է ստվարաթղթե արկղի մեջ, յուրաքանչյուր արկղի մեջ 100 հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |